ԴԱՎԻԹ ԴԱՎԻԴՅԱՆ
Իրավաբան

ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Սույն աշխատությունը նվիրված է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման հիմնահարցերին: Աշխատության մեջ ներկայացված է՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունների կանխարգելման ընդհանուր սոցիալական միջոցների համալիրը և նրանցում ներառված միջոցները, ինչպես նաև ամրագրված են այլ հեղինակների մոտեցումներ և կարծիքներ տվյալ հարցի վերաբերյալ:

Հիմնաբառեր *- պետական, քաղաքական, հասարակական, կանխարգելում, ոտնձգություն, հանցագործություն, սպանություն:*

Հասարակական վտանգավոր ոտնձգությունների կանխարգելումը քրեագիտության մեջ դիտարկվում է որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, կազմակերպչական բնույթի միջոցների իրականացմամբ հանցագործության պատճառների չեզոքացման նպատակներով հասարակական հարաբերությունների սոցիալական կարգավորման միջոցներից մեկը:

Նկատենք, որ ընդհանուր սոցիալական կանխարգելման գործառույթները հաջորդականորեն իրականացվում է հասարակության ամբողջ առաջընթաց զարգացմամբ (մասշտաբային սոցիալ-տնտեսական, քաղաքական, կազմակերպչական և այլ խնդիրների լուծումներով) «...խոշորամասշտաբ միջոցառումների ամբողջ համախմբով, որոնք ապահովում են հասարակության, մարդկային հարաբերությունների, տնտեսական, քաղաքական, հոգևոր և այլ ոլորտների առաջընթաց զարգացում: Այդ միջացառումները հետապնդում են առավել լայն նպատակներ, քան պայքարը հանցավորության դեմ, և վերջինս ոչ միշտ է առանձնացվում այդ միջոցառումների մշակման և իրականացման դեպքում: Սակայն, կարծես «զուգահեռ», դրանք սահմանափակում են քրեագիտական երևույթների և գործընթացների ծագումը, զարգացումը և գործառնությունը, քրեական իրավիճակների ծագման հնարավորությունները և հասարակության անդամների հանցագործ ուղղուն անցումը»[1]:

Ինչպես արդարացի նշում է Վ. Վ. Լունեևը, առաջադրված խնդիրների լուծումը «...նպաստում է հանցագործ վարքագծի կանխարգելմանը սոցիալական խմբերի, կոլեկտիվների, յուրաքանչյուր անձի կյանքի, գործունեության, ծառայության, առօրյայի և հանգստի նյութական, մշակութային պայմանների բարելավման, անհատի բարոյական ձևավորման անբարենպաստ պայմանների և քրեական դրդապատճառների ծագումը պայմանավորող այլ քրեածին գործոնների չեզոքացման միջոցով»[2]:

Ըստ Ս. Ի. Գերասիմովի կարծիքի, ներկայումս հետխորհրդային հասարակարգերում ձևավորվել են բոլոր նախադրյալները, որպեսզի էական ուշադրություն հատկացվի քրեագիտության մեջ հանցագործության կանխարգելման ընդհանուր սոցիալական մակարդակի առանձնացման վերաբերյալ ավանդական և ընդհանուր ընդունված թեզին, վերջինիս տակ ընկալվում է հասարակության զարգացումը: Ըստ հեղինակի տեսանկյան, հանցագործության ընդհանուր սոցիալական կանխարգելումը, անկասկած, ազդում է վերջինիս, դրա պատճառային կոմպլեքսի վրա, ընդ որում ոչ միայն կանխարգելիչ գործունեության մակարդակներից մեկի, այլ այդ գործունեության նախադրյալների (անհրաժեշտ պայմանների, բազայի, հիմքի) որակով[3]:

Այդ իմաստով պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգությունների կանխարգելման ընդհանուր սոցիալական միջոցների համալիրը պետք է իրենում ներառի հետևյալ միջոցները.

1. Պետական իշխանության և տեղի ինքնակառավարման մարմինների գործունեության ոլորտում.

- հետևողականորեն ապահովել սահմանադրական իրավունքները, որոնք երաշխավորում են օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարությունը,
- ստեղծել պայմաններ տնտեսական բարեկեցության բարելավման համար՝ հակադրվելով չա-

www.journal.lawinstitute.am

փազանցված սոցիալ-տնտեսական անհավասարությանը:

Ըստ քրեաբանների ընդհանուր կարծիքի, տնտեսական և սոցիալական բնույթի դրական փաստերը տիրապետում են բնական կանխարգելիչ հատկություններով, կրճատում են բնակչության ըստ նյութական եկամուտի բևեռացման աստիճանը, բնակչության բոլոր շերտերի բավարար կենսամակարդակի ապահովումը, նյութական, մշակույթային, հոգևոր պահանջների բավարարումը նպաստում է հասարակության մեջ հոգեբանական լարման նվազեցմանը, կազմակերպել պետական ծառայողներին սոցիալական լարումների փաստերի բացահայտման հնարավորության ոլորտներում, ուսուցանել նրանց դոմինանտ վարքագծային ձևերով անձանց շարքում աշխատանքի առանձնահատկություններին,

- հաստատել ազգային և պատմամշակութային արժեքները, աջակցել հայրենասիրությանը և ցուցադրել պետության, ժողովրդի որպես քաղաքացիական ազգային մշակութային բնույթը,

- համատարած և հետևողականորեն կասեցնել անհանդուրժողականության և բռնության քարոզչությունը, իրավական հետապնդման ենթարկել նրանց, ովքեր իրականացնում են բռնության ակտեր պետական կամ հասարակական գործիքների նկատմամբ,

- ակտիվացնել և խթանել բնակչության զանգվածային հարցումների միջոցով սոցիալական հարաբերությունների միջավայրի պետական և հասարակական մոնիթորինգի համակարգերը:

2. Կրթության և դաստիարակության ոլորտում.

- դպրոցական և համալսարանական կրթության համակարգերում հաստատել հասարակական կյանքի ազգային մշակույթային հայեցակարգը,

- իրականացնել ուսուցիչների և դասավանդողների նախապատրաստում սոցիալ-քաղաքական երկխոսության հարցերում գիտելիքների և դրույթների առարկայի վերաբերյալ,

- մշակել և գործնականում կիրառել ըստ հայրենասիրական դաստիարակության, աշակերտներին բռնության կիրառությամբ սոցիալական կոնֆլիկտների լուծման չգիտակցվածության համոզման սոցիալական ծրագրեր:

3. Զանգվածային լրատվական միջոցների գործունեության ոլորտում.

- իրականացնել տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ, համացանցային հրատարակությունների և գրականության, ինչպես նաև զանգվածային զվարճության արդյունքների կանոնավոր մոնիթորինգ իշխանափոխության, պետական կամ հասարակական գործիչներին դասվող անձանց ֆիզիկական չեզոքացման կոչերի բացահայտման առարկայի վերաբերյալ,

- մշակել քրեական բռնության խնդրի լուսաբանման սկզբունքների վերաբերյալ լրագրողների արտիա,

- ցուցաբերել աջակցություն զանգվածային լրատվական միջոցներին, որոնք հասցեավորված են երեխաներին և երիտասարդությանը, առաջադրում են հանդուրժողականության և հայրենասիրության ոգով դաստիարակչական նպատակներին:

4. Ըստ քաղաքացիական հասարակության հասարակական կազմակերպությունների և այլ ինստիտուտների ուղղությունների.

- քաղաքական կուսակցություններին և շարժումներին ցանկալի է իրենց ծրագրերում ունենալ սահմանադրականության և բարոյական նորմերի վրա հստակ ձևակերպված գործունեության սկզբունքներ և դիրքորոշումներ,

- քաղաքական կուսակցություններին և շարժումներին առաջարկվում է մշակել պահանջներ և չափորոշիչներ, որոնք բացառում են իրենց շարքերում, իսկ առավել ևս՝ ընտրություններում և ղեկավար պաշտոններում անձանց առկայությունը, ովքեր համակարծիք են կամ աջակցում են բռնության ասպեկտներին,

- ստեղծել նոր և պահպանել գործող ոչ կառավարական կազմակերպությունները և միավորումները, ովքեր զբաղվում են խաղաղապահ գործունեությամբ, համերաշխության և խաղաղության գործի քաղաքացիական ծառայությանը,

5. Գիտական հետազոտությունների մոնիթորինգի ոլորտում.

- իրականացնել հետազոտությունների անցկացում ըստ խաղաղության և հանդուրժողականության, բռնության և կոնֆլիկտային խնդիրների, այդ թվում այնպիսի գիտությունների շրջանակներում ինչպես սոցիալական հոգեբանությունը, ժողովրդագիտությունը, հասարակագիտությունը, քաղաքագիտությունը, պատմությունը,

- ստեղծել միջառարկայական բնույթի հետազոտական խմբեր և կենտրոններ, ինչպես նաև կարգավորել ըստ բռնության հակադրության ամսագրերի, սերիական հրատարակությունների և մեթոդաբանական գրականության տպագրությունը, վերջիններս հաշվարկված են ինչպես մասնագետների, այնպես նաև առավել լայն լսարանի համար,

- ցուցադրել գաղափարախոսությունների, ծրագրերի և գործողությունների չկայացվածությունը և հասարակական վնասը, ինչպես նաև հանցագործ բնույթը, որոնք իրենցում ամփոփում են պետական, քաղաքական կամ հասարակական գործ-

չի կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ ոտնձգությունները,

- գիտաշխատակիցների միջոցով ստեղծել հետազոտական խմբեր և կառույցներ հասարակական կարծիքի, սոցիալական հարաբերությունների, քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների գործունեության մոնիթորինգի իրականացման, ճգնաժամային իրավիճակների բացահայտման և ըստ դրանց լուծումների կիրառական հանձնարարականների մշակման նպատակներով:

Հատուկ-քրեագիտական կանխարգելումը կայանում է հանցագործ վարքագծի առանձին տեսակների և խմբերի հետ կապված քրեածին գործոններին նպատակաուղղված ազդեցության մեջ: Որոշակի տեսակի հանցագործության բնորոշ պատճառների և պայմանների կոմպլեքսների չեզոքացումը կամ կասեցումը իրականացվում է համապատասխան կոմպենտենտ սուբյեկտների գործունեության գործընթացում, վերջիններիս համար կանխարգելիչ գործառույթը հանդիսանում է իրենց մասնագիտական խնդիրների իրականացումը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգությունների հատուկ-քրեագիտական կանխարգելման անմիջական հետազոտություններին անցնելով? նշենք, որ դրա օբյեկտները, սուբյեկտները և բովանդակությունը մեծամասամբ սահմանվում են մեր կողմից դիտարկված հանցագործությունների դետերմինացման առանձնահատկություններով:

Պետական, քաղաքական կամ հասարա-կական գործչի կյանքին ոտնձգության պատճառային բազմաշերտությունը, որում միահյուսվում են բռնությամբ կատարվող հանցագործությունների դետերմինանտները, ինչպես նաև հատուկ պայմաններ և պատճառներ, որոնք բնորոշ են քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին, առաջ են քաշում տարբեր կանխարգելիչ միջոցառումների մշակման և դրանց հաջորդական իրականացման անհրաժեշտություն: Պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգության կանխման որպես առաջին մակարդակ կարելի է համարել կազմակերպված, բռնությամբ կատարվող հանցագործության կանխարգելումը, որոնց մասնավոր արտահայտումը հանդիսանում է ՔՕ հոդ. 305-ում նախատեսված հանցագործությունը: Երկրորդ մակարդակը իրենից ներկայացնում է անմիջական կանխարգելիչ ազդեցությունը հատկապես պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքին ոտնձգությունների համար հատուկ քրեածին գործոնների վրա: Հասկանալի է, որ մեկ, ըստ ծավալի սահմանափակ աշխատանքի շրջանակներում օբյեկտիվորեն հնարավոր չէ դիտարկել բոլոր մակարդակները, ինչի հետ կապված մենք կկենտրոնացնենք ջանքերը ՀՀ ՔՕ հոդ. 305-ում նախատեսված հանցագործության հատուկ պայմանների և պատճառների վրա կանխարգելիչ ազդեցության համակարգային միջոցների օպտիմալացման հանձնարարականների մշակման վրա:

Որպես կանոն, սոցիալ-քրեագիտական կանխարգելումը իրականացվում է ըստ հանցագործության հետ պայքարի ուժեղացման վարչական և միջվարչական պլանների (ծրագրերի) ձևով: Դրանցում նախատեսվում է միջոցառումների համակարգ, որոնք կողմնորոշված են հանցագործության կոնկրետ տեսակների և խմբերի ու որոշակի տարածքում ամբողջ հանցագործության կանխարգելմանը:

Նրան զուգահեռ, թե ինչպես օպերատիվ-հետախուզական գործունեությունը ձեռք է բերում իրավական և տեսական բազա, դրա գործառույթները դառնում են առավել բազմանիստ, ծագում են վերջինիս առարկան կազմող երևույթների առավել խորը հետազոտության հնարավորություններ: Իսկապես պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների կյանքի այնպիսի ոտնձգությունների կանխարգելումը, մեր կողմից ուսումնասիրվող գործողությունների փաստերին կազմակերպված հանցագործ ձևավորումների մասնակցությունը, համապատասխան գործիչների անվտանգության ապահովման համակարգի խոցելիությունը, առանց օպերատիվ-հետախուզական բնույթի ուժերի և միջոցների կիրառության հնարավոր չէ:

Անհրաժեշտ է նշել, որ քրեագիտության բոլոր կատեգորիաները ունենում են անմիջական ազդեցություն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և մարտավարության վրա՝ հանցագործությունը, դրա գործոնները, հանցագործի անձը և այլն: Այսպես, օպերատիվ-հետախուզական վերլուծության հիման վրա սահմանվում են հանցագործության միտումները, բացահայտվում առավել ախտահարված օբյեկտները և տարածքները, կատարվում կանխատեսումային եզրակացություններ հանցագործ արտահայտումների թվի, կառուցվածքի և առավել հավանական վայրերի վերաբերյալ: Այս եզրակացությունները կիրառվում են նույն տարածքների և օբյեկտների հսկողության կազմակերպման մեջ օպերատիվ-հետախուզական սուբյեկտների օպերատիվ ուժերի բաշխման տարբերակների ընտրության ժամանակ:

Քրեագիտության մեջ հացագործի անձը՝ լայն

www.journal.lawinstitute.am

և ծավալուն հասկացություն է, որը արտահայտում է տարբեր տեսակների հանցագործների սոցիալական էությունը, նրանց բնութագրող հատկանիշների, հատկությունների, կապերի, զարգացման, սոցիալական և անհատական կենսական պայմանների հետ գործունեության մեջ վերցված և այս կամ այն աստիճանով հանցագործության կատարումը սահմանող նրանց բարոյական և հոգևոր կյանքի բարդ համալիրը:

[1] Տե՛ս Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. М., 2014. С. 272.
[2] Տե՛ս Лунеев В. В. Мотивация преступного поведения. М., 1991. С. 339.
[3] Տե՛ս Герасимов С. И. Концептуальные основы и научно-практические проблемы предупреждения преступности, автореф. дис.... д-ра юрид наук. М., 2001. С. 10.

Давид Давидян
Юрист

РЕЗЮМЕ
Вопросы предотвращения убийства государственного, политического или общественного деятеля.

Данная работа посвящена вопросам предотвращения убийства государственного, политического или общественного деятеля.

В данной работе представлены вопросы предотвращения убийства государственного, политического или общественного деятеля, общее предупреждение социальных и домогательственных мер включая в них, отношения и мнения других авторов по этому вопросу.

Ключевые слова *- государственный, политический, общественный, предотвращение, домогательства, преступление, убийство.*

David Davidyan
Lawyer

SUMMARY
The State, Political or The Prevention Issues Of Assassination Of Public Figure

This work is devoted to the state, political or the prevention issues of assassination of public figure. In this work is represented the state, political or the complex of general social measures of the prevention encroachments on the life of public figure and the measures included in theirs, as well as codified approaches and opinions of other authors on that issue.

Keywords *- state, political, public, prevention, harassment, crime, murder.*